ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ աբեղա Մկրտչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն՝ իբրեւ զպաստաւորն» (Ղուկ. ԻԲ 26) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 11-ին, կիրակի.—Խաչվերաց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Հոգիատաւիղ քնարահարութեամբ եկայք եւ ասասցուք. Փառք ս. Խաչիդ ալէլուիա, Խաչեցելոյդ ալէլուիա, սուրբ Յարութեանդ ալէլուիա» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Բարեկենդան Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

*
* *

Սեպտեմբերի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել աբեղ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Մի այսուհետեւ հոգայցէք վասն վաղուի, զի վաղիւն վասն իւր հոգասցի» (Մատթ. Զ 34) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 10-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանների, Մայր Աթոռի աշխատավորության, Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականների ընդլայնված հավաքույթ, որտեղ ծավալուն խոսքով հանդես եկավ Նորին Սրբությունը (տես էջ 49):

*
* *

Հոկտեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

*
* *

Հոկտեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 23-ին, կիրակի.—Գիտ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան աբեղ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք, և զսուրբ յարութիւնդ քո փառաւորեմք» (Ժամագիրք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: